Գրքերաբներ բոլոր յեկեղեցիներին միացեք

ԽՍՀՄ Սենդային արդյունաբերության ժողկոմատ
Սանիտարական Պատասխանատվության Հանձնաժողովի բաժանմունք

614.31 : 658.8
A 3760

ՀՐԱՄԱՆ № 490

ԽՍՀՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺՈՂԿՈՄԱՏԻ
23 ՓԵՏՐՎԱՐԻ 1934 Թ.

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ԽՍՀՄ-ի Մասժողկոմատի Սենդային արդյունաբերության ձեռնարկությունները մաքրելու յեվ այդ ձեռնարկություններում մաքրություն պահպանելու կանոններ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Սեպտեմբերվան 1936 թ.

Ստեփանավանի տպարան
Տպագիր Մ—№ 5972 Տիրաժ 1500

ՀՐԱՄԱՆ

ԽՍՀՄ-Ի ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ № 490

23 փետրվարի 1934 թ. Քաղ. Մոսկվա

«Խ. Ս. Հ. Մ.-Ի ՄԱՏԺՈՂԿՈՄԱՏԻ ՄՆՆԴԱՑԻՆ ԸՆԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՑԵՎ ԱՅԴ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ»։

1. Հաստատել և ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Մանդարդյունաբերության բոլոր ձեռնարկություններում գործադրության դնել սրան կից «ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Մանդարդյունաբերության ձեռնարկությունները մաքրելու և այդ ձեռնարկություններում մաքրություն պահպանելու սանիտարական կանոնները»։

Արգելել մաքրող անձնակազմին ոգտագործելու այնպիսի աշխատանքներում, որոնք վոչ մի կապ չունեն մաքրելու և մաքրություն պահպանելու գործի հետ։

Նախազգուշացնել ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Սննդարդյունաբերության ձեռնարկությունների դիրեկտորներին, որ մաքրող անձնակազմն ուրիշ աշխատանքներում ոգտագործելու դեպքում նրանք կյենթարկվեն պատասխանատվության։

3. Պարտավորեցնել ձեռնարկությունների դիրեկտորներին՝

ա) Անմիջապես լրացնել ձեռնարկությունների մաքրող անձնակազմը.

բ) Ձեռք բերել բավարար քանակով ինվենտար ու նյութեր՝ մաքրող անձնակազմի նորմալ և անխափան աշխատանքն ապահովելու համար.

գ) Մանրազննին մշակել «այս կանոնները» բանվորների մեջ՝ ցեխերում և բրիգադներում.

դ) Ստորագրությամբ «այս կանոնները» հայտարարել ցեխերի պետերին, հերթափոխ վարպետներին, բրիգադիրներին, ճարտարապետ—տեխնիկական և քիմիա—բակտերիոլոգիական հսկողության աշխատողներին։

4. Պարտավորեցնել ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Սանիտարական Սպասարկման Գլխավոր Վարչությանը, Ճյուղային Գլխավոր Վարչությունների և ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Տեխնիկական պրոպագանդի բաժնի հետ, անհրաժեշտ քանակությամբ տպագրել հիշյալ «կանոնները» և ժամանակավորապես բոլոր ձեռնարկություններին, յելնելով հետևյալ հաշվից՝ 10 որինակ խոշոր ձեռնարկության և 5 որինակ՝ միջակին։

5. Պարտավորեցնել ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Սանիտարական Սպասարկման Գլխավոր Վարչությանը վոչ ուշ, քան ապրիլ ամիսը կազմակերպել սույն հրամանի կիրառման ժամանակավոր ստուգում։

ԽՍՀՄ-ի Մատժողկոմի տեղակալ՝ ՌԻԽԱՆՈՎ.

Հաստատում եմ
ԽՍՀՄ-ի Մատակարարման Ժողովրդական Կոմիսարի տեղակալ
Կ. ՈՒԽԱՆՈՎ
23 փետրվարի 1934 թ.

ՀԱՎԵԼՎԱԾ ԽՍՀՄ-ի Մատ-ժողկոմատի հրամանի № 490, 23 փետրվարի 1934 թ.

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԽՍՀՄ-Ի ՄԱՏԺՈՂԿՈՄԱՏԻ ՍՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՅԵՎ ԱՅԴ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. ՄԱՔՐՄԱՆ (уборка) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Սննդի յուրաքանչյուր ձեռնարկության մեջ մաքրումը կատարվում է հատուկ նշանակած անձնակազմով, վորը կազմում է մաքրության բրիգադ կամ ցեխ։

1. Մաքրման կազմակերպումը դրվում է դիրեկտորի՝ մաքրության գծով ոգնականի վրա, իսկ վորտեղ այդպիսին չկա՝ բրիգադիրի կամ մաքրության ցեխի վարիչի վրա։ Մաքրմանը

հակում և Մատժողկոմատի ձեռնարկությունների սանիտարա—տեխնիկական տեսուչը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սննդաարդյունաբերության մեծ ձեռնարկություններում դիրեկտորի՝ մաքրության գծով ոգնականի պաշտոնը սահմանվում և ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի, կամ նրա ճյուղային վիճակավոր գարչությունների հատուկ կարգադրությամբ։ Մաքրության ցեխեր ստեղծվում են այն ձեռնարկություններում, որոնց բանվորների և ծառայողների թիվը 500 և ավելին և։ Մնացած ձեռնարկություններում կազմակերպվում են մաքրության բրիգադներ։

2. Կտրականապես արգելվում է մաքրող անձնակազմի ոգտագործումը արտադրական կամ այլ մաքրման հետ կապ չունեցող աշխատանքներում։

3. Մաքրող և մաքրություն պահպանող անձնակազմին պատկանում են՝

ա) հավաքարարուհիները, հավաքարարները,

բ) հատակ լվացողները,

գ) հատակ մաքրողները,

դ) ախտահանիչները,

յե) դեղինսեկտորները,
զ) դերատիզատորները,
է) սանիտարական գումակի աշխատողները,
ը) բաղնիքների և ջրյաններին սենյակում (душевых) աշխատողները,
թ) հանրակացարանների աշխատողները,
ժ) աղբահանները,
ի) դունապանները և այլն։

4. Արտադրական ամանեղենի ու ինվենտարի լվացողները, մեքենաների ու ապարատների յուղողները, մաքրողները և նման այլ կատեգորիայի պատկանող ոժանդակ արտադրական աշխատողները չեն հանդիսանում մաքրող անձնակազմ ու չեն կարող ոգտագործվել այդ նպատակների համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ճաշարաններում մատուցողները համարվում են արտադրական աշխատողներ և մաքրման աշխատանքներում նրանց ոգտագործել չի կարելի։

5. Ձեռնարկների մաքրումը կատարվում է արտադրության բնույթին և առանձնահատկության համապատասխան։ Մաքրող անձնակազմի քանակը, նրա աշխատանքի կազմակերպումը յուվ

յուրաքանչյուր առանձին ձեռնարկություն մաքրելու կարգը սահմանում է սանիտարա—տեխնիկական տեսուչը՝ դիրեկտորի ոգնականի, բրիգադիրի, կամ մաքրության ցեխի վարիչի և արտադրական ցեխերի ու մասերի պետերի հետ միասին։

6. Մաքրող անձնակազմի աշխատանքը կազմակերպելիս բրիգադի ներսում պետք է պահպանվի աշխատանքի բաժանման սկզբունքը։ Այսպես որինակ, հավաքարարների բրիգադում—աշխատողների մի մասը նշանակվում է բոլոր պանելները լվանալու և մաքրելու համար, մյուս մասը՝ դռներն ու պատուհանները մաքրելու համար, յերրորդը՝ սանդուխքների վանդակները ու բակը մաքրելու համար և այլն։

Խոշոր և միջակ ձեռնարկություններում մաքրումը պիտի կատարվի բրիգադային մեթոդով. փոքր ձեռնարկություններում բրիգադները կարող են փոխարինվել առանձին հավաքարարներով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Խոշոր և միջակ ձեռնարկությունների ցուցակը սահմանում են ճյուղային գլխավոր վարչությունները՝ ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Սա-

նիտարական Սպասարկման Գլխավոր Վարչության հետ միասին։

7. Ձեռնարկությունների բոլոր ցեխերը, նրա կազմի մեջ մտնող բոլոր շենքերը և բակի տարածությունը բաժանվում են սանիտարական մասերի, որոնց մաքրման համար կցվում են մշտական բրիգադներ կամ առանձին հավաքարարներ։

Դրա համապատասխան սանիտարական մասեր կարող են լինել որինակ՝ առանձին ցեխերը, կամ բոլոր սանդուխքները, բոլոր պանելները, բոլոր դռներն ու պատուհանները, բակի զանազան մասերը և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սանիտարա-տեխնիկական տեսուչը, դիրեկտորի ոգնականի, մաքրության ցեխի վարիչի կամ բրիգադիրի հետ միասին, յելնելով արտադրության բնույթից և առանձնահատկություններից, սահմանում են սանիտարական մասերի քանակը, անհրաժեշտ հավաքարարների բրիգադների քանակը և այդ մասերն սպասարկելու համար առանձին հավաքարարների անհրաժեշտ քանակը։

8. Հավաքարարների բրիգադները յենթարկվում են դիրեկտորի՝ մաքրության գծով ոգնա-

կանին, իսկ այնտեղ, վորտեղ չկա այդպիսին՝ մաքրության ցեխի վարիչին կամ բրիգադիրին։

9. Արտադրական ցեխի պետը կամ հերթապահ վարպետը սանիտարա—տեխնիկական տեսչի հետ միասին սահմանում է մաքրության բրիգադի աշխատանքի կարգն իր ցեխում, բրիգադին ցույց և տալիս մաքրման հերթականությունը և հետևում նրա ընթացքին։ Արտադրական ցեխի պետը կամ հերթապահ վարպետը, մաքրության անբավարար լինելու դեպքում իրավունք ունեն խոտանելու կատարված մաքրումը։ Նրանց կողմից խոտանված մաքրումը նույն բրիգադի միջոցով անմիջապես կատարվում է յերկրորդ անգամ։

10. Մաքրելու ձևերի մասին մաքրող բրիգադը հրահանգ ստանում է դիրեկտորի ոգնականից, բրիգադիրից կամ մաքրության ցեխի վարիչից՝ ձևնարկության սանիտարա — տեխնիկական տեսչի ցուցմունքների հաշվառմամբ։

11. Յուրաքանչյուր ցեխի կամ մասի համար մաքրելու ժամկետը սահմանում է սանիտարա-տեխնիկական տեսուչը՝ յելնելով արտադրության պայմաններից։

12. Մի քանի հերթափոխությամբ աշխատող

ձեռնարկությունները պետք և սպասարկվեն հերթափոխ մաքրող բրիգադներով, ըստ վորում մաքրելու համար պիտի ոգտագործվեն հերթափոխությունների ընդմիջումները, ճաշի ընդմիջումները, գիշերվա ժամերը և այլն։

13. Հավաքարարների յուրաքանչյուր բրիգադ կամ առանձին հավաքարարներ պետք և ունենան բավարար քանակի ծածկոցներ և այլ պարագաներ կամ նյութեր՝ մաքրելու ժամանակ սարքավորումը ծածկելու համար. նրանք պետք և ունենան նաև մաքրելու համար անհրաժեշտ քանակությամբ սարքի՝ ստորև հիշված ինվենտար ու մաքրելու միջոցներ.

ա) հատուկ գույնով ներկած դույլեր։

բ) Խոզանակներ և ավելներ։

գ) Փալասներ, մահուզի կտորներ, սպունգներ, մաչալկաներ, տոպրակներ, վոզնիկներ։

դ) Թիակներ, քերիչներ, յեղաններ, փոցխեր, բահեր։

յե) Ծածկոց—շապիկներ, յերեսսրբիչներ։

զ) Հեշտ տեղափոխելի շլանգներ՝ ջրհան մեքենայով (с брандсбоями):

ե) Աղբարկղներ կամ սայլակներ, փոշի ծը-

ծող սարքավորում (пылесосы), հիդրոպուլտեր, սանդուխքներ, տարբեր չափի ձողեր։

ը) Ոճառ և քիմիական միջոցներ (շչոլոկ, սոդա, չիստոյլ—աղաթթու, ամոնիակ, նավթ և այլն)։

14. Մաքրելու ամբողջ ինվենտարը, նյութերը և այլն պետք յեղած քանակով (վոչ պակաս, քան 3 ամսվա պաշար) պահվում են հատուկ շենքում և ծախսվում ձեռնարկության վարչության կողմից սահմանված կարգով։ Աղաթթուն և այլ ուժեղ ազդող ախտահանիչ միջոցները պահվում են հատուկ պահարանում՝ փականքի տակ և ոգտագործվում սանտեսչի հսկողության։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Զուգարանները մաքրելու ինվենտարը պահվում է առանձին և նրա ոգտագործումը վորևե այլ նպատակի համար արգելվում է։

15. Ցեխերը մաքրելիս առատորեն պիտի գործադրել տաք ջուր, գոլորշի, թեփ, կավիճ, ավազ, զմռնիտ (наждак), ծեծած կարմիր աղյուս, յուղային կալեր և այլն։

16. Նյութերի գործածելու նորմաները և մաքրման համար գործադրվող քիմիական խառ-

նոր-գնների դեղատոմսը տեղում սահմանում և սանիտարա—տեխնիկական տեսուչը՝ ձեռնարկության վարչության (գլխավոր ճարտարապետ) հետ միասին։

2· ԲԱԿԻ ՄԱՔՐՈՒՄԸ

17. Ամառն ամեն որ բակը ջրում են և ավլում որական վոչ պակաս, քան 2 անգամ։ Բակը ջրելու համար պիտի կառուցված լինեն հատուկ ծորակներ և հարմարեցված լինեն տեղափոխվող շլանգներ։ Նշված նպատակների համար թույլատրվում և ոգտագործել հրդեհային ծորակները և շլանգները՝ հրդեհային պաշտպանության հատաձայնությամբ։ Միաժամանակ ջրվում են և ծառատունկերը։ Այն ձեռնարկությունները, վորոնք ջրմուղ չունեն, բակը ջրելու համար պետք և ունենան ջրի հատուկ տակառներ։

18. Ամեն որ ամբողջ աղբը բակից ու աղբարկղներից դուրս և տարվում, կամ սանիտարական տեսչի ցուցմունքներով այրվում և տեղում՝ հրդեհային պաշտպանության հատաձայնությամբ։ Բակի սահմաններում աղբը խարույկով այրելն արգելվում և (աղբարկղների ախտահանման ժա-

սին տես 1933 թ. նոյեմբերի 1-ի № 1799 «Ախտահանման կանոններ» հրամանը)։

Բակի սափորները (УРНЫ) մաքրում են վոշ պակաս, քան որակյան մեկ անգամ և ախտահանում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Աղբարկղների և բակի սափորների քանակը սահմանում է ձեռնարկության սանիտարա-տեխնիկական տեսուչը։

19. Զմեռը բակի ձյունը կուտակվելու դեպքում սիստեմատիկորեն մաքրում են և ձեռնարկությունից դուրս տանում։

Բացի այդ, տարվա տաք յեղանակներն ըսկըսվելիս ձեռնարկության ամբողջ տերիտորիան պետք է մաքրել սառույցից, ձյունից և աղբից։

20. Խոշոր և միջակ ձեռնարկություններում պետք է կազմակերպել սանիտարական հատուկ գումակ (ծածկված և ներսից թիթեղապատ)՝ մրնացորդները, աղբը և կեղտոտություններն անընդհատ դուրս տանելու համար (տես 1933 թ. նոյեմբերի 1-ի № 1799 «Գումակի ախտահանման» հրամանը)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կարուկ կերպով արգելվում է սանիտարական գումակի

ոգտագործումը՝ հումույթ, կիսաֆաբրիկատներ կամ պատրաստի մթերք տեղափոխելու համար։

21. Փոքր ձեռնարկություններում մնացորդներն ու կեղտոտությունները ամեն անգամ դուրս տանելուց հետո գումակը ախտահանում են ախտահանման կանոնների համաձայն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Զմաքրած ու չախտահանված գումակով արգելվում է հումույթ, կիսաֆաբրիկատներ և պատրաստի մթերքներ տեղափոխելը։

22. Բակի տերիտորիայի վրա գտնվող և ոգտագործման համար պիտանի արտադրական տարան պիտի դարսել ծածկի տակ՝ կույտերով, 3 մետրից վոչ բարձր, կույտերի միջև թողնելով 0,7 մետրից վոչ պակաս տարածություն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Վերանորոգման յենթակա տարան նույնպես դարսվում է ծածկի տակ՝ առանձին կույտերով։

23. Արգելվում է ձեռնարկության տերիտորիայի վրա պահել անպետք տարա, գոմաղբ, ջարդոտած ապակի, խոտանված թիթեղյա տուփեր, թղթի կտորտանք, սյրված ածուխի մնացորդներ, մոխիր և արտադրության այլ մնացորդներ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Զեռնարկության տերիտորիայի վրա ճահճոտ տեղեր ունենալու դեպքում խարամը (шлак) ոգտագործել նրանց լցնելու և պնդացնելու համար։

24. Շինանյութերը պետք և պահվեն կանոնավոր կերպով դարսված կույտերով։

25. Բակի զուգարաններն ամեն որ (որական 2 անգամից վոչ պակաս) պետք և մաքրել նրանցում պահվող հատուկ թիերով և ավելներով, վորից հետո ախտահանել ծծմբակարբոլյան խառնուրդով կամ քլորային կրով։ Վոտաստեղերը լցվում են քլորային կրով։ Ամեն անգամ աշխատանքն ավարտելուց հետո թիակներն ու ավելներն ախտահանվում են նույն ախտահանիչ միջոցներով։ Կոյուղային կոլեկտորները, աղբաջրերի առվակները և այլն մաքրվում են սանիտարա — տեխնիկական տեսչի սահմանած ժամկետներում։

ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

3. ՀՈՒՄՈՒՅԹԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ, ԵՍՏԱԿԱԴՆԵՐԻ, ԳԵՊԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ, ԳՈՒՄԱԿԻ ՅԵՎ ԱՅԼՆԻ ՄԱՔՐՈՒՄԸ

26. Ամեն որ աշխատանքն ավարտելուց հետո՝ հումույթային հրապարակները, եստակադները ու գեպի ձեռնարկությունը տանող ճանապարհները պետք է խնամքով մաքրել, ջրով լվանալ և սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջով, ախտահանման նպատակով գիշերը փրոել կրի բարակ շերտ կամ կրաջուր շաղ տալ։

27. Ամեն որ առավոտյան, մինչև հումույթի ստանալը, հումույթի հրապարակը և եստակադները խնամքով պետք է մաքրել գիշերվա ընթացքում նատած փոշուց և կրից (յնթե ախտահանվել են) և ջրով մաքուր լվանալ։

28. Ամառը հումույթը փոշուց պաշտպանելու համար, հումույթի հրապարակին կամ եստակադին կից տարածության վրա (շատ հումույթ տեղափոխելու ժամանակ) սիստեմատիկաբար ջուր շաղ տալ՝ այդ նպատակին հարմարեցված շլանգներով կամ ցնցուղներով։

29. Հումույթային հրապարակում և եատակադի վրա արգելվում է պահել բանջարեղենի և այլ մնացորդները, փչացած հումույթ, դատարկ տարա և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բանջարեղենի ու պտղի մզված քը, ուսիլային վոսկորները և այլն պահվում են փակ, ներսից թիթեղապատ հատուկ արկղների մեջ 6 ժամից վոչ ավելի։ Այդ արկղներն ախտահանվում են սանիտարա—տեխնիկական տեսչի ցուցմունքով։

30. Բոլոր մնացորդները և անպետք հումույթն ամեն որ պետք է տեղափոխվեն վարչության և սանիտարա—տեխնիկական տեսչի ցույց տված տեղը։

31. Գործարանային գումակը, վորը զբաղված է տարբյով պատրաստի մթերք, ինչպես նաև տարբյով հումույթ (բացի թարմ բանջարեղենից) փոխադրելու աշխատանքով, վեցորյակում մեկ անգամից վոչ պակաս, իսկ անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ, պետք է յենթարկվի կանոնավոր ժաքրման։

Այն գումակը, վորը փոխադրում է առանց տարբյի հումույթ և պատրաստի մթերք (միս,

յերշիկ) կամ տարայով բանջարեղեն և այլն, պետք է ամեն որ խնամքով մաքրել և համաձայն սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջի՝ լվանալ ջրով, գոլորշիով կամ ախտահանել (տես 1933 թ. նոյեմբերի 1-ի № 1799 հրամանը)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մսի, ձկան, պահածոյի, կաթի և արդյունաբերության այլ ճյուղերի ձեռնարկություններում, ինչպես նաև առցարաններում գումակը պետք է լվանալ ասֆալտած կամ ցեմենտած հատուկ հրապարակների վրա, որոնք պետք է ունենան աղբաջրի առվակներ, սառ ու տաք ջրի շլանգներ (այնտեղ, որտեղ կա ջրմուղ և շոգու ուժ մատակարարող տնտեսություն)։

32. Ձեռնարկության տերիտորիայի վրա արգելվում է ունենալ գոմ, խոզանոց, ճագարանոց, շան բուն, թռչնոց և այլն։ Այնտեղ, որտեղ կան վերոհիշյալ շենքերը, նախքան ձեռնարկության տերիտորիայից նրանց հեռացնելն ամեն որ պետք է մաքրվեն՝ նրանց սպասարկող անձնակազմի կողմից, ըստ որում այդ շենքերի սալահատակած, ասֆալտած կամ ցեմենտած մասերը պետք է ջրով մաքուր լվանալ և ախտահանել

հատուկ ախտահանման կանոնների։

Կտրուկ կերպով արգելվում է այդ շենքերում աղբ ու աթար պահելը կամ անասուններին լողացնելու համար տաշտ ու չաներ կառուցելը։

4. ՇԵՆՔԵՐԻ ՄԱՔՐՈՒՄԸ

33. Ցանցերը, հատակ մաքրելու շորերը յուղ վոտքերը մաքրելու այլ հարմարությունները դուրս են բերում բակ և կեղտից ու փոշուց մաքրում սանիտարա—տեխնիկական տեսչի ցույց տված տեղերում։

Ցանցերն ու հատակ մաքրելու շորերն արգելվում է մաքրել ցեխերում, սանդուխքների վրա և միջանցքներում։

34. Սանդուխքային վանդակների ճաղաշարքերը խնամքով մաքրում են խոնավ շորով յուղ չորացվում. դրանից հետո աստիճաններն ավլում ու լվանում են սանիտարա—տեխնիկական տեսչի վորոշած ժամկետներին, սակայն յուրաքանչյուր հերթափոխության մեկ անգամից վոչ պակաս։

35. Ներցեխային բոլոր դռներն ամեն որ լվանում են տաք ջրով, ոճառով ու շչոլոկով յուղ չորացվում։ Առանձնահատուկ խնամքով լվացվում

են դռների բռնակների շոշափման տեղերը, բռնակները և սովորաբար վոտքով կեղտոտվող դռների ներքին մասերը։

Դրսի դռները լվացվում են հարկ յեղած դեպքում, սակայն տասնորյակում մեկ անգամից վոչ պակաս։

36. Դուրսը նետած դռները պարբերաբար ներկում են՝ շուտ չորացող ներկերով։ Վորոշ ցեխերում (մսի, յերշիկի, պահածոյի և այլ արտադրությունների) մաքրությունն ավելի լավ պահպանելու համար, սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջով դռները պատում են ցինկած թիթեղով։

37. Հատակները մաքրում են ամեն որ, ըստ վորում նախապես մաքրում են խոնավ շորով, հետո լվանում են ջրով և չորացվում։ Անհրաժեշտության դեպքում հատակների ցեխը մաքրում են քերիչներով։

Յուղոտ, կպչուն, սալխաքուն (նայած արտադրության պայմաններին) հատակները լվանում են տաք ջրով, ոճառով, շչոլոկով—որակաձ մի քանի անգամ՝ յելնելով արտադրության բնույթից և առանձնահատկություններից։ Այդ աշխատանքը կատարվում է սանիտարա—տեխնիկա-

կան տեսչի և ցեխի վարչության կողմից սահմանված ժամանակում։

38. Թքամաններն ու ցեխերում գտնվող սափորները (УРНЫ) լվանում են ամեն որ և սխտահանվում 3 տոկոսյա կարբոլյան լուծույթով։

39. Մթերքների ճաշարանների համար գործածվող արկղները—«սանիտարական խոտան»—լցվելու դեպքում ամեն որ դատարկում են, վորից հետո լվանում են շշոլոկախառն տաք ջրով կամ ուժեղ գոլորշիով։

40. Ներգործարանային զուգարանները, սանդուխքներն ու աղբաջրերի առվակներն ամեն որ խնամքով մաքրում են, լվանում տաք ջրով, վորից հետո սխտահանվում կանոնների համաձայն սխտահանում են։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Զուգարանները կոյուղին և այլ սարքավորումը մաքրելու համար նշանակվում է մաքրող հատուկ բրիգադ։

41. Վոտատեղերն ու ալիսուարների տակի թասերը մաքրում և սխտահանում են 5 տոկոսյա բյուրեղային կարբոլյան թթվի լուծույթով և ջրով լվանում, իսկ թասերը լցվում են թարմ թեփով յուրաքանչյուր հերթափոխության մեկ

անգամ, և ավելի հաճախ սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջով։

Զուգարանների դռները, պանելները և ջրմուղու արմատուրան ամեն որ լվանում են տաք ջրով և ոճառով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Զուգարաններում պանելները պետք և ներկված լինեն յուղաներկով։

42. Պիսուարների և ունիտազների միզաթթվային աղերի նստվածքները մաքրում են աղաթթվով, վորից հետո լվանում ջրով։

43. Զուգարանների պատները, անկախ տարվա ժամանակից, կեղտոտվելու դեպքում սպիտակացվում կամ ներկվում են, ամեն անգամ հատուկ սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջի։

44. Յուղաներկով ներկած բոլոր պանելներն ամեն որ մաքրում են ոճառի և շչոչկի լուծույթի մեջ թրջած շորով։ Բացի այդ, վեցորյակում մեկ անգամից վոչ պակաս, այդ պանելները լվանում են տաք ջրով և չորացվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սոսնձային պանելները ներկվում են տարեկան 4 անգամից վոչ պակաս։ Նրանց վրա կեղտոտ բծեր հայտարերելու դեպքում, այդ

բծերն անպայման սպիտակացվում են կամ նորից ներկվում, անկախ տարվա ժամանակից, համաձայն սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջի։

45. Պատուհանի ապակիներն ու շրջանակները (ներսի) լվանում են և մաքրում յուրաքանչյուր վեցորյակում մեկ անգամից վոչ պակաս, և ավելի հաճախ՝ սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջով։ Ապակիների մաքրումը կատարվում է հետևյալ կերպ. նախապես նրանց թրջում են քիմիական նյութով, իսկ հետո մաքրում և չորացնում։ Պատուհանների շրջանակների մինչի տարածությունը խնամքով մաքրում են փոշուց և սարդոստայնից։ Պատուհանների շրջանակները ներկում են տարեկան մեկ անգամից վոչ պակաս, և ավելի հաճախ՝ սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջով։

Պատուհանների դրսի կողմը լվանում և մաքրում են տարեկան յերկու անգամից վոչ պակաս, և ավելի հաճախ՝ յերբ այդ պահանջում է սանիտարա—տեխնիկական տեսուչը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Արգելվում է շրջանակների մինչև և պատուհանների վրա վորևե առարկա կամ անձնական իր դնել, կամ պատուհանների վանդակ-

ների վրա փալասներ չորացնել և այլն։

46. Կորուկ կեղտով արգելվում է ջարդված ապակիների փոխարեն դնել ֆաներա, խավաքարտ և այլն։ Ջարդված ապակիներն անմիջապես փոխարինվում են նորերով։

47. Բոլոր արտադրական և ոժանդակ շենքերի սպիտակացումը կատարվում է տարեկան 2 անգամից վոչ պակաս, ըստ վորում առաստաղները, պատերն ու անկյունները՝ նրանց վրա կեղտոտ բծեր լինելու դեպքում, սպիտակացվում են ավելի հաճախ, ամեն անգամ սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջով—անկախ տարվա ժամանակից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Դրսի սպիտակացումը կամ շենքի ներկելը, ինչպես նաև տանիքների վերանորոգումն ու ներկելը կատարվում է տարեկան մեկ անգամից վոչ պակաս, և ավելի հաճախ՝ սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջով։

48. Բոլբոսով ծածկված պատերը, առաստաղները ու անկյունները մինչ սպիտակացումը նախապես լվանում են 3 տոկոսյա պղնձի կամ յերկաթի արջասպի լուծույթով։

49. Պատերի և առաստաղների այն մասերը,

վորոնք ծածկված են լինում մնացուն կնդտի բծերով, նորից սվաղում, հետո սպիտակացնում կամ ներկում են՝ չապասելով ընդհանուր վերանորոգմանը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բոլոր խոշոր և միջակ սննդային ձեռնարկություններում պիտի լինի ներկարարի մշտական հաստիքային պաշտոն. ներկարարը պիտի լինի մաքրության ցեխի կամ բրիգադի կազմում։

50. Սվաղը թափած բոլոր տեղերը անմիջապես պիտի նորից սվաղել, սպիտակացնել ու ներկել, անկախ տարվա ժամանակից, չսպասելով ընդհանուր վերանորոգման։

51. Առաստաղները, պատերն ու անկյունները փոշուց և սարդոստայնից մաքրում են հատուկ հարմարեցրած փափուկ խոզանակներով, ջնջոցով և այլն վեցորյակում մեկ անգամից վոչ պակաս, և ավելի հաճախ՝ սանիտարա— տեխնիկական տեսչի պահանջով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Կեղտոտելուց խուսափելու համար, մինչ մաքրելը, ամբողջ մթերքն ու սարքավորումը պիտի ծածկել հատապատասխան ծածկոցներով ու բրեզենտներով։

52. Կենցաղային սպասարկության շենքերը (լոգանների սենյակ (ДУШ), հանդերձարան, ծըխարան, բուֆետ, վարսավիրանոց և այլն) մաքրում են ամեն որ՝ սույն կանոնների և Մատժողկոմատի 1933 թ. նոյեմբերի 1-ի № 1799 հրամանի հիման վրա։

5. ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ԻՆՎԵՆՏԱՐԻ, ԱՐՄԱՏՈՒՐԻ, ՑԵԽԱՅԻՆ ԳՈՒՄԱԿԻ ՅԵՎ ԱՅԼՆԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

53. Ներցեխային սարքավորումն ու ինվենտարը, վորոնք տեխնոլոգիական պրոցեսի ընթացքում շփվում են հումքի, կիսաֆաբրիկատների կամ պատրաստի մթերքի հետ, յենթակա յեն մաքրման, նայած ինչ նյութերից են նըրանք պատրաստված և ինչ ընույթ ունի վերամշակվող մթերքը։

ա) Փայտի, մարմարի, քարի, ցեմենտի և այլն բոլոր սարքավորումը (մսի, ձկան և արդյունաբերական այլ ճյուղերում) աշխատանքից անմիջապես հետո, յուրաքանչյուր հերթափոխության նախապես լվանում են տաք կամ քլորացրած ջրով (ըստ սանիտարական տեսչի ցուցմունքի), հետո ոճառի կամ ոճառի ու շչոլոկի լուծույթով խնամքով մաքրում են մթերքի մնացորդներից (մանավանդ ճեղքվածքային տա-

բածությունները), ապա մաքուր վոդողում, լըվանում գոլորշիով և սրբում մաքուր շորով։ Սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջով փայտի սարքավորումը ռանդվում է, իսկ ճեղքվածքային տարածությունները լցվում՝ անկախ տարվա յեղանակից և սարքավորման ու ինվենտարի ընդհանուր վերանորոգման ժամանակից։

բ) Մետաղյա սարքավորումը (պողպատի, յերկաթի, չուգունի, պղնձի, կլայեկած, վոչ կլայեկած, եմալած, վոչ եմալած և այլն) աշխատանքից անմիջապես հետո լվանում են անպայման տաք ջրով և շչոլոկի լուծույթով, գոլորշիով շըփում ու չորացնում։ Պղնձյա մասերը մաքրում են մինչ փայլելը և անպայման չորացնում։ Կլայեկած մասերի կլայեկը մաշվելու դեպքում նորից են կլայեկում, և ավելի հաճախ՝ սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջով, անկախ նրանից թե քանի անգամ է կլայեկվել։

54. Սարքավորումը, ինվենտարը, ներցեխային գումակն ու կոնվեյերային տրանսպորտյորները և այլն, ներկվում են տարեկան 3 անգամից վոչ պակաս, և ավելի հաճախ՝ սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջով, անկախ տարվա ժամանակից։

ա) Յերկաթի և փայտի մասերը ներկվում են անպայման բաց գույնով, վորը չի քողարկում կեղտն ու բծերը։

բ) Արտադրության պրոցեսում տաքացող

մեքենաների մասերը ծածկում են հրակայուն լաքով։

Արգելվում է ներկել մեքենաների և դազգյահների ներսի մասերը, որոնք անմիջականորեն շփվում են հումքի, կիսաֆաբրիկատների և պատրաստի մթերքների հետ։

55. Մեխանիզմների և ապարատների դազգյահների բոլոր ներսի մասերը, նայած ինչ չափով են նրանք կեղտոտվել, յենթարկվում են հատուկ մաքրման՝ ըստ սանիտարա—տեխնիկական տեսչի և վարչության ցուցումների։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ .— Արգելվում է մեքենաները, դազգյահները և այլն մաքրել և լվանալ այնպիսի նյութերով, որոնք կարող են փչացնել մեքենաները կամ փչացնել մթերքը, դարձնելով այն անոգի գործածության համար վտանգավոր (ծծմրա —ադաթթու և այլն)։

56. Մեքենաների, դազգյահների և այլ սարքավորման մաքրումը կատարում են նրանց վրա աշխատող բանվորներն ամեն մի հերթափոխության աշխատանքը վերջացնելուց անմիջապես հետո՝ ցեխային վարչության և սանիտարա—տեխնիկական տեսչի ընդհանուր հսկողության տակ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.-Մեքենաների, դազգյահների և այլ սարքավորման մաքրման մասին մանրամասն ցուցումներ տըր-

վում են գլխավոր վարչությունների կամ տրեստների կողմից, համաձայնեցնելով այն ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Սանիտարական Սպասարկման Գլխավոր Վարչության հետ։

57. Յուրաքանչյուր հերթափոխություն պարտավոր է մյուս հերթափոխին իր մեքենաներն ու բանվորական տեղը հանձնել մաքուր դրությամբ։

58. Ավտոկլավներ ունեցող բոլոր հիմնարկներում, վեցօրյակում մեկ անգամից վոչ պակաս, ավտոկլավում տեղավորվող սարքավորման ու ինվենտարի բոլոր մանր իրերը, նաև սանհագուստը և ծածկոցները յերկու ժամվա ընթացքում պետք է ստերիլիզացիայի յենթարկվեն 115—120 ջերմաստիճանում, ըստ վորում ստերիլիզացիայի յենթարկվող բոլոր իրերը նախապես լվացված պիտի լինեն։

Իրերի ընտրությունը և ստերիլիզացիայի հսկողությունը գլխավորում են սանիտարա—տեխնիկական տեսուչն ու հիմնարկի գլխավոր ճարտարապետը։

59. Ողափոխման կամերաները և խողովակները մաքրում են վեցօրյակում մեկ անգամից վոչ պակաս՝ խոնավ ձեվով, հատկապես հարմարեցրած խոզանակներով և շորերով։ Ողափոխման կամերա-

ներում արգելվում է այլ իրեր պահելը։

60. Էլեկտրական լամպերը, շտեպսելները, էլեկտրական արմատուրան և այլն, մաքրում են տասնորյակում մեկ անգամից վոչ պակաս։

61. Ներցեխային կշեռքները, վորոնց վրա կշռում են հումքը, կիսաֆաբրիկատները և պատրաստի մթերքները, սիստեմատիկորեն ներկվում են, իսկ կշեռքի տակի տարածությունը ծածկում են ցինկյա թիթեղով։

62. Ցեխերում աշխատող գումակը մաքրում և սանիտարողիգիենական դրության մեջ են դնում՝ տաք ջրով, ոճառով և շչոլոկով լվանալու միջոցով, վորից հետո մաքուր ջրով անպայման նորից լվանում են ու չորացնում։

63. Արգելվում է ցեխային գումակը, վորն ուտիլային մնացորդներ և տեղափոխում, վորելե այլ նպատակի համար ոգտագործել։ Ուտիլային մնացորդներ տեղափոխող գումակը պիտի ներկված լինի մնացած ներցեխային գումակից տարբերող գույնով. գումակն ամեն որ պիտի գոլորշիով լվանալ և ախտահանել։

64. Գործարանային բոլոր վերելակները (лифты) ու ապրանքային վերահանները (под'емники) պետք է ամեն որ մաքրել, տաք ջրով լվանալ ու չորացնել։

Վերելակների, վերահանների, տրանսմիսիայի

և այլնի ցանցային ու այլ պաշտպանիչ սարքավորումները մաքրում են հատուկ խոզանակներով՝ խոնավ ձեվով, վերցրյակում մեկ անգամից վոչ պակաս։

65. Ներցեխային բոլոր խողովակաշարքերը (ջրմուղային, կոյուղային, գոլորշու, գազի և այլն) ներկում են համապատասխան գույներով, ըստ վորում տաք խողովակաշարքերն անպայման կարմիր գույնով (այրվածքի նախազգուշացում)։

Ժանգոտած և կեղտոտած խողովակաշարքերի մաքրումն ու ներկելը կատարվում է սանիտարա—տեխնիկական տեսչի պահանջով՝ անկախ տարվա ժամանակից։

66. Խողովակաշարքերի մաքրումը կատարվում է խոնավ ձեվով, սրբելով նրանցից փոշին՝ հատկապես հարմարեցրած խոզանակներով կամ շորով։

Խողովակաշարքերի մոտ կեղտոտված պատերը սպիտակացվում են, յերբ այդ անհրաժեշտ է լինում։

67. Սառցարաններում և սառցային կամերաներում գտնվող խողովակաշարքերը, վորոնք ծածկված են «ձյան մուշտակներով», ինչպես նաև կաթնամթերքների, տոմատի և այլ արտադրությունների խողովակաշարքերը մաքրում են այն ժամկետներին ու այն միջոցներով, վոր սահմանում են սանիտարա—տեխնիկական տեսուչն

ու հիմնարկի գլխավոր ճարտարապետը։

68. Սառցային կամերաների դռների վարագույրները լվանում են ամսական մեկ անգամից վոչ պակաս՝ շչոլոկով յեփացնելու միջոցով։

69. Ջեռուցման գլխավոր գիծը (ռադիատորներ) ամեն որ սրբում են խոնավ ձեվով։ Ռադիատորների հետևի տարածությունները սիստեմատիկաբար, սակայն վեցորյակում մեկ անգամից վոչ պակաս, մաքրում են փոշուց, սարդոստայնից ու աղբից և ըստ կարիքի սպիտակացվում են կամ ներկվում։ Ռադիատորների վրա արգելվում է այլ իրեր դնել, ինչպես և նրանց վրա հատակ մաքրելու շորեր, թաղիք, փոտնամաններ և այլն չորացնել։

70. Ռադիատորները ներկվում են ամեն տարի հիմնարկի ընդհանուր վերանորոգման ժամանակ։

71. Աշխատանքը վերջանալուց և մաքրումն ավարտելուց հետո բոլոր մեքենաները, դազգյահները և այլ սարքավորումը պիտի ծածկվեն մաքուր ծածկոցներով, բրեզենտներով և այլն։

6. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

72. Ցուրաքանչյուր հերթափոխության աշխատանքն սկսվելուց առաջ բոլոր մեքենաները, դազգյահները և այլ սարքավորումը 5 րոպեի ընթացքում ցնխում գոյություն ունեցող հատուկ ազդանշանով դատարկ շարժընթացի յեն դցում, վորի ընթացքում կատարվում է նրանց սանիտարական-առողջապահական վիճակի հսկիչ ստու-

գումը։ Հենց այդ ժամանակ ել, յեթե անհրաժեշտ է՝ նրանց լվանում են, սրբում, զոլորշի յեն տալիս և ստուգում մնացած իրերի ու ինվենտարի սանիտարական, ինչպես նաև բանվորների անձնական առողջական դրությունը։ Ստուգումը կատարում է ցեխի պետը, հասարակական կամ սանիտարա—տեխնիկական տեսուչը։ Այդ ստուգումը կոչվում է «սանիտարական ստուգում»։

73. Սանիտարական ստուգման ամենորյա արդյունքները ցեխի վարչությունը՝ հասարակական կամ սանիտարա—տեխնիկական տեսչի հետ մեկտեղ նշում են ցեխի սանիտարական մատյանում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ցեխի սանիտարական մատյան վարելու ձևն ու հրահանգը սահմանում է ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի Սանիտարական Սպասարկման Գլխավոր Վարչությունը։

74. Սանիտարական ստուգումն անհրաժեշտ է ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի բոլոր խոշոր և միջակ ձեռնարկությունների համար։

7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

75. Ցեխի ամբողջ աշխատանքի ընթացքում ցեխերի և բանվորական տեղի մաքուր պահելու պարտականությունն ընկնում է բանվորների և բրիգադիրների վրա։ Ցեխի մաքուր պահելու հա-

մար պատասխանատու յե ցեխի պետը։ Ձեռնարկության դիրեկտորն ու գլխավոր ճարտարապետը պատասխանատու յեն ամբողջ գործարանի սանիտարական—առողջապահական վիճակի համար։ Դիրեկտորը պարտավոր և ձեռնարկությանը լրիվ չափով ապահովել մաքրող անձնակազմով և մաքրման բոլոր միջոցներով։

76. Դիրեկտորի՝ մաքրության գծով ոգնականը, մաքրության ցեխի վարիչը կամ մաքրության բրիգադիրը պատասխանատու յեն իրենց բրիգադների կամ առանձին հավաքարարների կատարած մաքրման վրա կի, մաքրման սուն կանոնների իր ժամանակին և ճիշտ կատարելու, ինչպես և մաքրման բրիգադներում յեղած կարգապահության համար։

77. Մնացորդները, աղբն ու կեղտն իր ժամանակին դուրս չտանելու համար առանձնապես պատասխանատու յեն ձեռնարկության դիրեկտորը, գումակի վարիչը կամ տնտեսվարը։

78. ԽՍՀՄ-ի Մատժողկոմատի ձեռնարկության սանիտարա—տեխնիկական տեսուչը պատասխանատու յե՝

ա) Հիմնարկի դիրեկտորի հետ հավասար չափով՝ հիմնարկի առողջապահական վիճակի համար։

բ) Սուն կանոնները արտադրության մեջ կատարելու համար յեվ

գ) Սրանց իրականացման միջոցները

ձեռք առնելու համար։

Սույն կանոնները խախտող հանցավորներն հեռացվում են արտադրությունից կամ յենթարկվում են վարչական ու քրեական պատասխանատվության։

ԽՍՀՄ-ի Մասժողկոմատի Սանիտարական Սպառարկման Գլխավոր Վարչության պետ՝ ՏՈՄՊԱԿՈՎ



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038387

[084] 758

А I/3760

Санитарные правила производства уборки и поддержания чистоты на предприятиях пищевой промышленности Наркомснаба СССР.